



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**  
**Հ Բ Ա Մ Ա Ն**

«15» ~~դեկտեմբերի~~ 2005 թ.

N 173-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՎԱՐՂԵՆԻՍԻ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱԸ ԱՆԺԱՍԿԵՏ ԵՎ  
 ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
 ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի  
 հունվարի 20-ի «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական  
 ընկերությունը վերակազմակերպելու մասին» N104-Ն որոշման  
 հրամայում են՝

1. Հաստատել.

ա) «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային  
 կազմակերպության կանոնադրությունը (կցվում է);

բ) «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի  
 նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, նախկին  
 «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական ընկերության ակտիվների  
 կազմից առ 1-ը հուլիսի 2005 թվականի դրությամբ առանձնացված և «Վարդենիսի  
 նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝  
 որպես պետական սեփականություն, անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով  
 ամրացվող գույքի «Փոխանցման ակտը»՝ համաձայն հավելված N 1-ի;

գ) նախկին «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական  
 ընկերությունից առ 1-ը հուլիսի 2005 թվականի դրությամբ «Վարդենիսի նյարդահոգեբանական  
 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ սեփականություն  
 իրավունքով փոխանցվող գույքի և պարտավորությունների «Փոխանցման ակտը»՝ համաձայն  
 հավելված 2-ի և նրա NN 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 2.7, 2.8, 2.9, 2.10, 2.11, 2.12, 2.13, և 2.14  
 ներառյալ հավելվածների;

2. Տեղափոխման կարգով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»  
 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Սամվել Մեխակի  
 Խաչատրյանին:

3. «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային  
 կազմակերպության տնօրեն Ս. Խաչատրյանին՝ կազմակերպության կանոնադրությունը,  
 կազմակերպությանը փոխանցվող գույքի և պարտավորությունների փոխանցման ակտերը  
 ներկայացնել իրավաբանական անձանց պետական գրանցման:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել նախարարության աշխատակազմի  
 ղեկավար Չ. Մարգարյանի վրա:

*Վարդանյան*

Ա. Վարդանյան

«ԱՍՏՍՏՎԱԾ Է»  
Հայաստանի  
Հանրապետության  
աշխատանքի և սոցիալական  
հարցերի նախարարի  
գրանցման թիվ 173 478 հրամանով  
15. 12 - 2005թ

ԸՆԴՀԱՆՆԵՐ 507 ՕՐ.3  
«ԳՐԱՆՑՎԱԾ Է»  
Հայաստանի  
Հանրապետության  
ծեռնարկությունների  
պետական ռեգիստրի  
Վարդենիսի տարածքին բաժնի  
կողմից „ 22 „ 12 2005  
58.210.00378  
գրանցման թիվ  
034068108  
վկայական

Վարդենիսի տարածքային

Բաժնի պետ



«Վարդենիսի Նյարդահոգեբանական Տուն - Ինտերնատ»

Պետական ոչ առևտրային կազմակերպության

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

## I. Ընդհանուր դրույթներ

1. «Վարդենիսի և սոցիալական հարցերի նախարարության «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, բժշկասոցիալական բնույթի խնամակալական պետական ոչ առևտրային կազմակերպություն է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը» ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 20.01.05թ. -ի նո.104 ն որոշումով «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2. «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմավորվել է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (հետագայում տուն – ինտերնատ):

3. Տուն-ինտերնատը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից և դադարում լուծարման ավարտի պահից:

4. Տուն-ինտերնատի գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պետպատվերի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվությունների, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Տուն-ինտերնատը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Տուն-ինտերնատը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Հիմնադիրը պատասխանատու չէ իր տուն-ինտերնատի պարտավորությունների, իսկ տուն-ինտերնատը հիմնադրի պարտավորությունների համար:

7. Տուն-ինտերնատը ունի Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք և դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

8. Տուն-ինտերնատը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկում Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

9. Տուն - ինտերնատի գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Բ. Վարդենիս, Անդրանիկի-127:

10. Կազմակերպության անվանումն է «Վարդենիսի նյարդահոգեբանական տոն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Հայերեն կրճապատումն էՎՆՀՏԻՊՈԱԿ:

ռուսերեն "Вардениский Невропсихологический дом - интернат" Государственная коммерческая организация, ռուսերեն կրճատ՝ ВНДИГНКО  
անգլերեն "Vardenis nevro - psychological internat" State non Commercial Organization.  
անգլերեն կրճատ՝ VNPISNCO:

## II. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն – ինտերնատի գործունեության նպատակը և առարկան

11. Տուն – ինտերնատի ստեղծման նպատակը 18 տարին լրացած նյարդահոգեբանական և քրոնիկ հիվանդների, սոցիալապես անապահով տան անձանց շուրջօրյա խնամքի ապահովումն է:

12. Տուն – ինտերնատի գործունեության առարկան կազմակերպությունում խնամվող նյարդահոգեբանական հիվանդների և ծերերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, սոցիալ – հոգեբանական, բժշկական վերականգնողական աշխատանքների իրականացումը, սննդով, հագուստով և այլ կենցաղային անհրաժեշտ իրերով ապահովումը, խնամքի և դաստիարակության ապահովումը ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

14. Տուն – ինտերնատը իրականացնում է հետևյալ գործունեությունը

ա) Կազմակերպում է հիվանդների և ծերերի կենցաղային սպասարկության ապահովում է նրանց համապատասխան խմբասենյակներով, անկողնակապարագաներով, հագուստներով, կոշիկեղենով:

բ) Ապահովում է համապատասխան սննդով, ելնելով առողջական վիճակից

գ) Կազմակերպում է մասնագետ բժիշկների օգնություն, անհրաժեշտության դեպքում՝ դիսպանսերիզացում և վիրաբուժական միջամտություն,

դ) Անցկացնում է սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային միջոցառումներ:

դ.ա) Կազմակերպում է աշխատանքներ, ուղղված անձնակազմի որակավորման բարձրացմանը և աշխատանքների կատարելագործմանը:

դ.բ) Պահպանում է հիվանդների և ծերերի սեփականությունը հանդիսացող գույքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

ե) Ցերեկային կենտրոնի միջոցով իրականացնում է հոգեկան առողջության վերականգնման արտահիվանդանոցային ծառայություն, որը ուղղված է պսիխոլոգիկ տառապող անձանց, մտավոր սահմանափակ անձանց և նրանց ընտանիքներին:

14. Տուն – ինտերնատը գտնվում է հատուկ կառուցված շենքերում, որտեղ համապատասխանում են սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և անվտանգության տեխնիկայի պահանջներին և ունեն հիվանդների, ծերերի կյանքի և կենցաղի համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ:

15. Տուն – ինտերնատը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ տեսակները.

ա) հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի աճեցում

բ) բանջարեղենի, դրանց սերմերի և սածիլների աճեցում

գ) խոշոր եղջերավոր անասունների բուծում

դ) ոչխարների և այծերի բուծում

դ) ուրիշ խմբերում չներառված այլ մշակաբույսերի աճեցում

զ) ձկնեղենի ապխտում

- է) մեղվարուծություն
- ը) ջերմոցային տնտեսություն
- թ) հացի և թարմ հրուշակեղենի արտադրություն

16. Տուն-ինտերնատը կարող է ունենալ հիմնարկներ, ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ:

### III. Տուն-ինտերնատի կառավարումը

17. Տուն-ինտերնատի ընդհանուր կառավարումն իրականացնում է հիմնադրի կողմից լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմինը):

18. Լիազորված պետական մարմինը՝

ա) ապահովում է տուն-ինտերնատի բնականոն գործունեությունը պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

բ) հաստատում է տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

գ) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տուն-ինտերնատի տնօրեններ կայացնում և հաստատում է տուն-ինտերնատի կառուցվածքը և աշխատողների թիվը,

դ) իրականացնում է տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողություն:

ե) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում տուն-ինտերնատի տնօրեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

զ) լսում է տուն-ինտերնատի գործունեության մասին հաշվետվությունները, քննում նրա գործունեության վերստուգման արդյունքները, հաստատում տուն-ինտերնատի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

է) վերահսկողություն է իրականացնում տուն-ինտերնատի ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ,

ը) վերահսկողություն է իրականացնում տուն-ինտերնատի սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս տուն-ինտերնատի գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնման համար,

թ) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և տնտեսական ակտիվության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով» կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

19. Տուն-ինտերնատի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

20. Տուն-ինտերնատի տնօրենին պաշտոնի նշանակելն ու պաշտոնից ազատելը իրականացվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով»:

Տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն:

Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

21. Տնօրենը կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տուն-ինտերնատի տնօրենը օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես է գալիս որպես տուն-ինտերնատի հիվանդների և ծերերի խնամակալ:

22. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործակալ աշխատանքից:

23. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով տուն-ինտերնատին և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

24. Տնօրենը

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս տուն-ինտերնատի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է տուն-ինտերնատի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է տուն-ինտերնատի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում տուն-ինտերնատի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում տուն-ինտերնատի կառուցվածքը, աշխատողների թիվը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,

թա) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում տուն-ինտերնատի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

բբ) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

բգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

25. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

26. Տնօրենի բացակայության ժամանակ, նրա հրամանով, տնօրենի լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը:

27. Հիվանդների և ծերերի խնամքի, բժշկա-սոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման հարցերը քննարկելու և լուծելու նպատակով ստեղծվում է բժշկա-սոցիալական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

28. Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, բժշկական բաժանմունքի վարիչը, ռեաբիլիտոլոգը, տնտեսական հարցերով տնօրենի տեղակալը և այլ մասնագետներ, լիազորված պետական մարմնի ներկայացուցիչը:

29. Խորհուրդը կազմված է 11 անդամներից:

30. Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի անդամներից խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով.

31. Խորհրդի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ և քսանհրամսեշտության:

32. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) քննարկում և հաստատում է տուն-ինտերնատի աշխատանքային պլանը, բյուջեի ֆինանսական ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերը.

բ) քննարկում է բաժանմունքների աշխատանքների կազմակերպման հարցերը.

գ) քննարկում է բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեությունը.

դ) քննարկում է հիվանդների ու ծերերի խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարությունը

33. Խորհուրդի գործունեության կարգը սահմանվում է խորհրդի կանոնադրությամբ:

34. Տուն-ինտերնատի աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, տնտեսական կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, տուն-ինտերնատի ընդհանուր կանոնադրության ստորաբաժանումների, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

#### IV. տուն-ինտերնատի սեփականությունը

35. Տուն-ինտերնատի սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև տուն-ինտերնատի գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից: Տուն-ինտերնատի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

36. Տուն-ինտերնատը իրավունք ունի օրենքների, հիմնադրի կողմից լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն ու ֆինանսական միջոցները:

37. Տուն-ինտերնատին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ տուն-ինտերնատի լուծարումից հետո մնացած գույքի:

38. Տուն-ինտերնատի սեփականության պատկանման հոգսը կրում է տուն-ինտերնատը:

39. Տուն-ինտերնատի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

#### V. Տուն-ինտերնատին ամրացված գույքը

40. Հիմնադրի որոշումով տուն-ինտերնատին անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

41. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից տուն-ինտերնատին ամրացված գույքը:

42. Տուն-ինտերնատը իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Տուն-ինտերնատի իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում տուն-ինտերնատի ստացած եկամուտները տուն-ինտերնատի սեփականությունն են:

43. Հիմնադրի կողմից տուն-ինտերնատին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ տուն-ինտերնատի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:



## VI. Տուն-ինտերնատի ձեռնարկատիրական գործունեությունը

44. Տուն-ինտերնատը իր հիմնական գործունեությանը զուգընթաց ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով տուն-ինտերնատը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

45. Տուն-ինտերնատի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ բիմնադրի սահմանած կարգով:

46. Տուն-ինտերնատը իր կարիքների համար գնումները կատարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տուն-ինտերնատի համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում տուն-ինտերնատի կողմից պետության, մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Տուն-ինտերնատի կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

47. Տուն-ինտերնատի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

## VII. Վերահսկողությունը տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ

48. Տուն-ինտերնատի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

49. Տուն-ինտերնատի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության ստորարժանման կողմից:

## IX. Կանոնադրության վերակազմակերպումը և լուծարումը

50. Տուն-ինտերնատը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Տուն-ինտերնատը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Տուն – ինտերնատը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

51. Տուն – ինտերնատի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

52. Տուն – ինտերնատի կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

53. Տուն – ինտերնատը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

54. Տուն – ինտերնատի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

**ՓՈՒՍՆՑՄԱՆ ԱԿՏ**

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, նախկին «Վարդենիսի տուն-ինտերնատ» պետական փակ բաժնետիրական ընկերության ակտիվների կազմից առ 1-ը հուլիսի 2005 թվականի դրությամբ առանձնացված և «Վարդենիսի նյարդափոխանակական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես պետական սեփականություն, անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Սկզբնական արժեքը	Մաշվածությունը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը
						/դրամ/
1	2	3	4	5	6	7
I.	<b>ՇՆՆՔԵՐ</b>					
1	Վարչական շենք, I - II բաժանմունք	քառ. մ	600,0	32789000	17208000	15581000
2	III-IV-V բաժանմունքների շենքեր	քառ. մ	1062,6	52791000	27722300	25068700
3	Խոհանոց, գույքի պահեստ, լվացքատուն	քառ. մ	578,5	12750000	6562800	6187200
4	Պահակատուն	քառ. մ	27,5	1280000	608000	672000
5	Արտադրամաս, կաթսայատուն	քառ. մ	537,5	11850000	6106800	5743200
6	Էլեկտրական ենթակայան	քառ. մ	57,1	3867000	2310175	1556825
7	Սննդի պահեստ, էլեկտրաշարժակայան	քառ. մ	439,2	19446000	9709300	9736700
8	Ավտոտնակ	քառ. մ	147,5	3354000	1673200	1680800
9	Օժանդակ անասնաշենք	քառ. մ	373,6	9379397	1055182	8324215
10	VI բաժանմունքի շենք	քառ. մ	405,0	8866716	3198339	5668377
11	VIII բաժանմունք /հիվանդանոց/	քառ. մ	979,3	2102000	0	2102000
	<b>Ընդամենը</b>	<b>քառ. մ</b>	<b>5207,8</b>	<b>158475113</b>	<b>76154096</b>	<b>82321017</b>
II.	<b>ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
1	Գազատար	գ.մետր	819,0	6351926	784993	5566933
2	Գերեզմանոցի ցանկապատ	գ.մետր	310,0	1190315	193788	996527
	<b>Ընդամենը</b>	<b>գ.մետր</b>	<b>1129,0</b>	<b>7542241</b>	<b>978781</b>	<b>6563460</b>
	<b>ԱՄԲՈՂՁԸ</b>		<b>6336,8</b>	<b>166017354</b>	<b>77132877</b>	<b>88884477</b>

ՓՈՒՆԱՆՑՄԱՆ ԱԿՏ

Նախկին «Վարդենիսի տուն - ինտերնատ» ՊՓԲԸ-ից առ 01.07.05թ - ի դրությամբ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ սեփականության իրավունքով փոխանցվող գույքի և պարտավորությունների

NN	Միջոցների անվանումը	Չափի միավորը	Հանձնվող գույքի		Ծանոթություն
			քանակը	հաշվեկշռային /մնացորդային/ արժեքը /դրամ/	
I	Հիմնական միջոցներ-ընդամենը			26550,0	
	այդ թվում՝				
1	Տրանսպորտային միջոցներ	հատ	6	5454,4	տես ենթահավելված-2.1
2	Տնտեսական գույք, սարքեր, սարքավորումներ և այլ միջոցներ	դրամ		13094,7	տես ենթահավելված-2.2
3	Գրքեր	հատ	201	84,5	տես ենթահավելված-2.3
4	Մթերատու անասուններ	գլուխ	124	7916,4	տես ենթահավելված-2.4
II	Դեղորայք և վիրակապական նյութեր	դրամ		7056,3	տես ենթահավելված-2.5
III	Սննդամթերք	դրամ		4657,7	տես ենթահավելված-2.6
IV	Մակավարժեք և արագամաշ առարկաներ	դրամ		6246,9	տես ենթահավելված-2.7
V	Նյութեր	դրամ		7134,9	տես ենթահավելված-2.8
VI	Հեղուկ վառելիանյութ	լիտր	10436	2963,1	տես ենթահավելված-2.9
VII	Օժանդակ տնտեսության միջոցներ	դրամ		954,4	տես ենթահավելված-2.10
VIII	Աճեցվող և բույսեր անասուններ	գլուխ	229	4974,3	տես ենթահավելված-2.11
IX	Մեղվարնտանիք	հատ	89	4120,8	տես ենթահավելված-2.12
X	Դրամական միջոցներ ընդամենը	դրամ	x	2807,6	
	այդ թվում՝				
ա.	Հաշվարկային հաշիվներում	դրամ	x	2070,1	Տեղեկանքները կցվում են
բ.	Դրամարկղում	դրամ	x	737,5	Ակտը կցվում է
XI	Դեբիտորական պարտքեր	դրամ		63131,5	տես ենթահավելված-2.13
	Ընդամենը ակտիվներ	դրամ		130597,5	
XII	Պարտավորություններ-ընդամենը	դրամ		30410,2	
	այդ թվում՝				
ա.	Կրեդիտորական պարտքեր	դրամ		30410,2	տես ենթահավելված-2.14
	Ընդամենը	դրամ		100187,3	

Ենթահավելված--2.1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005 թ-ի դեկտեմբերի 15-ի N 173-Ա/1 հրամանի

**Ց Ա Ն Կ**

Նախկին «Վարդենիսի տուն - ինտերնատ» ՊՓԲԸ ակտիվների կազմից առ 01.07.05թ - ի դրությամբ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվող տրանսպորտային միջոցների

Հ/Հ	Միջոցների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Սկզբնական արժեքը	Մաշվածությունը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը /դրամ/
1	2	3	4	5	6	7
1	ԳԱԶ 3110	հատ	1	4190000	4081000	109000
2	ՎԱԶ 21213	հատ	1	2813580	2813580	0
3	ԵրԱԶ	հատ	1	3407000	3407000	0
4	ՈւԱԶ 3962	հատ	1	887822	708168	179654
5	Մերսեդես - բենց 200D	հատ	1	4850000	485000	4365000
6	Տրակտոր „Ֆուտիան“	հատ	1	1143920	343176	800744,0
	<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>		<b>6</b>	<b>17292322</b>	<b>11837924</b>	<b>5454398</b>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի  
2005 թ-ի դեկտեմբերի 15-ի N 173 Ա/1 հրամանի

Ց Ա Ն Կ

Նախկին «Վարդենիսի տուն - ինտերնատ» ՊՓԲԸ ակտիվների կազմից առ 01.07.05թ - ի դրությամբ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվող տնտեսական գույքի, սարքերի , սարքավորումների և այլ միջոցների

Հ/Հ	Գույքի, սարքերի, սարքավորումների և այլ միջոցների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Սկզբնական արժեքը	Մաշվածու թյունը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Շկաֆ բժշկական	հատ	1	250,5	250,5	0
2	Նկար	հատ	16	136000	136000	0
3	Մեղան բուֆետի	հատ	12	12000	12000	0
4	Նստարան	հատ	36	598613,24	319613,24	279000
5	Նստարան մեծ	հատ	32	528076	528076	0
6	Մահճակալ	հատ	201	6682336	5703720	978616
7	Հեռուստացույց Daewoo	հատ	2	265500	120750	144750
8	Նստարան փոքր	հատ	13	113300	113300	0
9	Արդուկ ԷԼ.	հատ	1	62000	32033	29967
10	Անվասայրակ	հատ	10	544007	167900	376107
11	Զգեստապահարան	հատ	23	510200	510200	0
12	Աթոռ դահլիճի	հատ	100	950400	950400	0
13	Մահճակալ փայտից	հատ	64	2598675	1576260	1022415
14	Արդուկ Tefal-400	հատ	2	81200	81200	0
15	Մագնիտաֆոն JVC-202	հատ	8	302510	302510	0
16	Մահճակալ երկաթից	հատ	18	657880	413130	244750
17	Բազկաթոռ այգեղուների համար	հատ	3	18000	12000	6000
18	Մահճակալի տուբրա	հատ	35	339348	190073	149275
19	Շկաֆ դեղորայքի	հատ	5	20921	20921	0
20	Պահարան բժշկական	հատ	1	7200	7200	0
21	Արդուկի սեղան	հատ	1	16000	14933	1067
22	Մահճակալ գույլկլի	հատ	11	418000	391400	26600
23	Հեռուստացույց LG	հատ	3	461100	133215	327885
24	Մեղան ճաշարանի	հատ	10	150000	20050	129950
25	Նստարան բուֆետի	հատ	7	107800	107800	0
26	Շկաֆ գարդիոն	հատ	1	3500	3500	0
27	Կասսա երկաթյա	հատ	13	378453	249452	129001
28	Մազկտրիչ MOZER	հատ	1	14500	14500	0
29	Բազկաթոռ ծերերի համար	հատ	6	30000	8000	22000
30	Ուղեգորգ	մետր	15,5	108500	12660	95840
31	Վիշիկա հանելուկ	հատ	1	154	154	0
32	Գրքապահարան	հատ	2	88460	88460	0
33	Գրասեղան	հատ	6	487000	479413	7587
34	Էլեկտրական կուր	հատ	2	54248	54248	0
35	Կալոռիֆեր	հատ	1	29366,66	29366,66	0
36	Աղբարկղ	հատ	2	104	104	0
37	Հեռուստացույց Shivaki	հատ	1	136000	83866	52134
38	Աթոռ փայտից	հատ	12	123975	118765	5210
39	Հեռախոս Panasonic	հատ	3	51300	51300	0
40	Քայլելու աթոռ	հատ	10	10000	4140	5860
41	Երկաթյա պահարան	հատ	4	310000	36160	273840

1	2	3	4	5	6	7
42	Մահճակալի պահարան	հատ	8	86400	8640	77760
43	Աթոռ	հատ	26	332000	16400	315600
44	Սեղան	հատ	4	40135,42	7735,42	32400
45	Հեռուստացույց	հատ	1	98600	9860	88740
46	Լվացքի մեքենա ըսսՄՈ	հատ	1	55000	23800	31200
47	Հեռուստացույցի տակդիր	հատ	2	97000	63200	33800
48	Գացի պլիտա	հատ	1	139200	48720	90480
49	Հեռուստացույց ՀցոՆՎ	հատ	1	87000	30450	56550
50	Դաշնամուր ԽԲՈրվօռ ՏՄՑ՝ ռԲՖ	հատ	1	220000	220000	0
51	Ջրի պոմպ	հատ	1	62500	62500	0
52	Ջահ պլասմասայից	հատ	5	88000	88000	0
53	Հայելի պատի	հատ	1	45000	45000	0
54	Սառնարան հվաջՈՎՄՈ	հատ	1	56000	42000	14000
55	Սանարան ԾՈՎԻՍ	հատ	2	390000	173875	216125
56	Լվացքի մեքենա	հատ	1	315000	315000	0
57	Ջրաչափ	հատ	2	95000	72330	22670
58	Գազահաշվիչ	հատ	2	53000	40620	12380
59	Դիվան	հատ	1	2486	2486	0
60	Հեռուստացույց ՉպՎո-714	հատ	1	28000	14400	13600
61	Մահճակալ փոքր	հատ	2	20000	7000	13000
62	Մարզական սարք	հատ	1	15000	4000	11000
63	Էլ. Ժառովնի	հատ	2	170000	140600	29400
64	Սեղան դեկավարի	հատ	2	743000	743000	0
65	Սեղան խորհրդակցական	հատ	2	304000	304000	0
66	Հեռուստացույցի պատվանդան	հատ	1	63000	63000	0
67	Գորգ 3 X 5 մ	հատ	2	347742	213917	133825
68	Սեղան 2 տումբանի	հատ	2	63184	14184	49000
69	Աթոռ փափուկ	հատ	8	110442	110442	0
70	Սեյֆ չիրիզվող	հատ	1	150000	140000	10000
71	Սառնարան	հատ	1	56000	41000	15000
72	Մահճակալ փափուկ	հատ	3	45000	39000	6000
73	Էլ. տաքացուցիչ	հատ	1	26000	18200	7800
74	Գրասենյակի փոքր սեղան	հատ	1	25000	17900	7100
75	Համակարգիչ Պենտիում	հատ	1	372000	372000	0
76	Սառնարան ԿԲՐՍ	հատ	1	15000	12000	3000
77	Գրամեքենա շՅՌՈՎՖ	հատ	1	105000	84250	20750
78	Հեռախոս ձեռքի Kenwood	հատ	1	100000	58333	41667
79	Սեղան գրասենյակի	հատ	2	130520	55544	74976
80	Հեռուստացույց Շարպ	հատ	2	618000	422300	195700
81	Ջահ	հատ	2	30000	30000	0
82	Հեռախոս-կոմուտատոր	հատ	1	148700	44610	104090
83	Փոշեկույ Daewoo	հատ	1	165760	74528	91232
84	Տեսամագնիտաֆոն Funa VCR 6600	հատ	1	75000	36250	38750
85	Խոլ (1 դիվան, 2 բազկաթոռով)	հատ	1	220000	73340	146660
86	Երաժշտական կենտրոն Panasonic	հատ	1	243600	83230	160370
87	Խոլ ութ կտորից	հատ	1	345000	115000	230000
88	Համակարգիչ Oliveti ph-1	հատ	1	510936	170781	340155
89	Սոնիտոր Oliveti cov1435	հատ	1	129540	43162	86378
90	Տպիչ Canon BJC-2100	հատ	1	157800	52540	105260
91	Համահարգիչ PIV-2600	հատ	1	692460	225038	467422
92	Սոնիտոր LCD-LG-L-15505	հատ	1	310004	100750	209254
93	Համակարգիչ սեղան	հատ	1	90600	18090	72510
94	Հայելի	հատ	1	46000	46000	0
95	Խոլ (դիվան, բազկաթոռ)	հատ	1	197000	60740	136260
96	Հեռախոս Panasonic KX-TS1	հատ	2	33900	29280	4620
97	Հեռախոս Panasonic	հատ	1	39550	33555	5995
98	Հեռախոս Nokia 6150 Cipab	հատ	1	222000	25900	196100

1	2	3	4	5	6	7
99	Գորգ 3*2 մետր	հատ	1	75000	8750	66250
100	Աթոռ գրասենյակի	հատ	18	291600	53460	238140
101	Կաթսա այլումինից 50 լ	հատ	4	108333,8	108333,8	0
102	Սառնարան խլաղոն	հատ	1	242000	191660	50340
103	Կաթսա	հատ	9	130000	109000	21000
104	Էլեկտրա պիտա	հատ	2	150000	130000	20000
105	Կարտոֆիլ մաքրող մեքենա	հատ	1	53355	34477	18878
106	Էլմատյաց	հատ	1	70000	70000	0
107	Փքաբլիթ պատրաստող մեքենա	հատ	1	265000	265000	0
108	Կարտոֆիլ մաքրող մեքենա	հատ	1	105500	63300	42200
109	Կշեռք 20 ԿԳ, պարով	հատ	1	11000	11000	0
110	Գազի սայլօջախ	հատ	1	50000	25000	25000
111	Ջրատաքացուցիչ Արիստոն 200լ	հատ	1	255200	89260	165940
112	Հյութահան	հատ	1	49300	49300	0
113	Կաթսա այլումինից 30 լ	հատ	1	20000	20000	0
114	Հաց կտրիչ	հատ	1	40700	34595	6105
115	Գազի սայլօջախ	հատ	1	253980	76194	177786
116	Ջրատաքացուցիչ 100լ	հատ	1	127800	38280	89520
117	Աթոռ խոհանոցի	հատ	2	29500	5410	24090
118	Կարտոֆիլ մաքրող մեքենա	հատ	1	60000	4000	56000
119	Էլ. կարի մեքենա 97Ա	հատ	2	150000	150000	0
120	Էլ.մեքենա «ՕՎԵՈՒՈԿ»	հատ	1	70000	70000	0
121	Ռետուց գործելու մեքենա	հատ	2	400000	400000	0
122	Կարի մեքենա	հատ	1	7619	5332	2287
123	Կարի մեքենա «ՎՆԻԳԱ»	հատ	1	5000	3500	1500
124	Գորգագործական դազգահ	հատ	7	350000	350000	0
125	Գազայրիչ /կարոնկա/	հատ	1	105000	12250	92750
126	Ջողման ապարատ	հատ	1	59000	36383	22617
127	Սրոց ֆուգան «ՇԿՈԼՆԻԿ»	հատ	1	95000	20600	74400
128	Հնոց ՏՈՒՊ-100	հատ	3	1200000	1200000	0
129	Դիզել-գեներատոր	հատ	1	52518	52518	0
130	Գիպկի վալ	հատ	1	70000	18660	51340
131	Գազառեզուկատոր	հատ	1	115000	51750	63250
132	Կաթի քիտոն	հատ	4	60000	60000	0
133	Կորմողարքիկա	հատ	1	530000	123666	406334
134	Գուբան-3 խոփանոց	հատ	1	100000	30000	70000
135	Խոտ հնծիչ	հատ	1	100000	30000	70000
136	Սիլիտրա ցրելու բաք	հատ	1	30000	30000	0
137	Խուցի ագրեգատ ԷՍԱ12/200Ա	հատ	1	190000	0	190000
138	Պոմպ	հատ	1	29857	29857	0
139	Ջրի պոմպ 14ԿՎՏ ԷՑՎ	հատ	1	530000	426670	103330
140	Սափրիչ «Գրունդիկ»	հատ	2	182500	33450	149050
141	Շկաֆ	հատ	8	3080	3080	0
142	Սեղան սանիտարական	հատ	1	48901	48901	0
143	Մազնիտաֆոն «ՊԻՈՆԵՐ»	հատ	1	150000	72500	77500
144	Հեռախոս «ՄԱՍՍՈՒՆԳ»-S400	հատ	1	180000	58500	121500
145	Անտենա	հատ	1	20000	20000	0
146	Մազնիտաֆոն «ԱՎՏՈՍՏԱՐ» ԱՍ800	հատ	1	59700	21390	38310
147	Մազնիտաֆոնի դիմամիկ կոմպլեկտ	հատ	1	15000	15000	0
148	Կարի մեքենա	հատ	1	160000	160000	0
149	Արդուկի մեքենա	հատ	1	220000	183330	36670
150	Կաթսա ցինկից	հատ	1	9310	6517	2793
151	Վաննա մետաղյա	հատ	3	117000	117000	0
152	Էլ. կուր 300լ	հատ	1	145000	43500	101500
153	Շկաֆ սառնարան	հատ	2	72872	72872	0
154	Կշեռք ՊՈՒ 50	հատ	1	231	231	0
155	Սառնարան պատի միջի	հատ	1	384985	230990	153995



1	2	3	4	5	6	7
156	Սառնարան «ՍԱՌԱԶԻԼՆԻԿ»	հատ	1	230000	101583	128417
157	Կանտեյնե՛ր քանցարեղեմի	հատ	20	40000	40000	0
158	Ցիստեր բեմզիմի	հատ	2	7277	7277	0
159	Մեղրաքամ	հատ	1	69600	40600	29000
160	Իսկրա	հատ	1	1923	1923	0
161	Կվարց ՕՈՎ 21	հատ	1	154	154	0
162	Սվետեյնիկ CH28	հատ	1	2781	2781	0
163	Տերմոստատ	հատ	1	3924	3924	0
164	Ֆեկ	հատ	1	5017	5017	0
165	Միկրոսկոպ	հատ	1	35000	35000	0
166	Արյան մեջ շաքարի քանակը որոշող սարք	հատ	1	89000	4450	84550
167	Ատամնաբուժական բազկաթոռ	հատ	1	210000	91000	119000
168	Ատամաբույժի բուռ. մեքենա	հատ	1	255000	110500	144500
169	Ատամնաբուժական ֆանար	հատ	1	38000	38000	0
170	Կասսա երկաթյա	հատ	1	70000	0	70000
171	Աթոռ փափուկ	հատ	2	27400	0	27400
172	Մետաղական տարա	հատ	1	75000	0	75000
173	Մետաղական տարա	հատ	1	20000	0	20000
174	Մահճակալ գուպկի	հատ	10	380000	0	380000
175	Մակճակալ	հատ	8	200000	0	200000
176	Տումբաչկա	հատ	2	16000	0	16000
177	Մեղան ճաշի	հատ	2	42000	0	42000
178	Պահարան բժշկական	հատ	2	50000	0	50000
179	Պահարան	հատ	2	40000	0	40000
180	Կախիչ	հատ	3	21000	0	21000
181	Մեղան 2 տումբանի	հատ	3	105000	0	105000
182	Մեղան գրասենյակի	հատ	1	25000	0	25000
183	Բազմոց	հատ	3	45000	0	45000
184	Ճաշասեղան	հատ	1	15000	0	15000
185	Գրասեղան 1 տումբանի	հատ	2	60000	0	60000
186	Մեղան դեկավարի	հատ	1	50000	0	50000
187	Նստարան	հատ	3	51000	0	51000
188	Ջրաչափ	հատ	1	79992	0	79992
189	Անդամաբույժի սալակ	հատ	6	60000	0	60000
	Ընդամենը		1026,5	37659861,62	24565197,62	13094688

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի  
2005 թ-ի դեկտեմբերի 15-ի N173-Ա/1 հրամանի

Ց Ա Ն Կ

Նախկին «Վարդենիսի տուն - ինտերնատ» ՊՓԲԸ ակտիվների կազմից առ 01.07.05թ - ի դրությամբ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվող գրքերի

						/դրամ/
Հ/Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Սկզբնական արժեքը	Մաշվածությունը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը
1	2	3	4	5	6	7
	Գրքեր	հատ	201	84500	0	84500
	Ընդամենը	հատ	201	84500	0	84500

Ենթահավելված - 2.4

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի  
2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 173 - Ա/1 հրամանի

ՑԱՆԿ

Նախկին «Վարդենիսի տուն-ինտերնատ» ՊՓԲԸ-ից «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, առ 01.07.2005թ-ի դրությամբ՝ սեփականության իրավունքով, փոխանցվող մթերատու անասունների

Գ/Գ	Անասունների անվանումը	Չափի	Քանակը	Գումարը
1	2	3	4	5
1	Կով	գլուխ	36	6064626,0
2	Մայր ոչխար	գլուխ	88	1851841,0
	Ընդամենը	գլուխ	124	7916467,0

«Հաշիատանքի և սոցիալական հարցերի նախարարի  
